

ՀԱՅՈՒԹԵՎ

ՊԻՏԱԿԻ ԳԻՏԵԼԵՍ

ԱՅԱՑԵՄՆԵՐ. I:

»»» 1839. »»»

(Ժ. 1. 9.)



ԱՅԱՑԵՄՆԵՐ. I:

ԸՆԴՀԱՆՈՒՐ և ցուրտ երկիրներու մէջ
քիչ անգամ կըպատահի որ երկրաշար-
ժութիւն ըլլայ . բայց տաք կլիմաներուն
տակը շատ անգամ և շատ սարսափելի շար-
ժեր կըլլան :

1755ին Հոկտեմբերի 20ին եղած շարժը
ան աստիճաննը սասանութիւն պատճառեց
գետնին, որ անգան կենդանիները անգամ
մեծ սարսափի մէջ ձգեց : Ասիկա շատ
ընդհանուր երկրաշարժութիւն մըն էր, և
ընդհանրապէս Մհջ Շարժ ըսվեցաւ :
Կըսվի թէ չորս միլիոն քառակուսի տեղ
տարածեցաւ, Խըրոպայի Խիրիկէին և Ռ.
մերիգայի մեծ մասերը շարժելով, Ամիկա-
նաը տակնուվը այ ընելով, ու Խըրոպայի
հարաւոյին կողմերուն մէջ, Հետսխային
և Հարաւային Վամբիգայի մէջ անհամար
աւերմունքներ ընելով :

Ովկիանոսին մէջը նաև ըստ անանկ շար-
ժեցան՝ որ մէջի ըլլովները կըկարծէին թէ
քարերու գէմ զարնըլվեցան : Շովենիշերք-
ներուն մատերը ջուրերը շատ խորունկը
իջան և ետքը յանկարծակի ան աստիճա-
նը բարձրցան, որ շատ տեղեր ծածկեցին,
և ամէն բան ողողելով ջուրերուն մէջը թա-
ղեցին : Միւս կողմանէ ցամաքը շարժած
ատենը շատ տեղեր ծովի ալիքներու պէս
ելան ու իջան . Հազարաւոր մարդոց կեան-
քը կորսըլվեցաւ . և անանկ անպատճելի գող

մը սարսափի մը տարածեցաւ, որուն նմանը
մահը եր ըրած ճշմարիտ աւերմունքներով
չէր կընար պատճառել :

Հըսութ:

ԱՅԱՑԵՄՆԵՐ, զրութեան մէջը եր-
կիրէս ետքը չըատն է : Աս մոլորակին
տրամադիմ 4000 մղոնէն էվելկեկ է, կամ
երկրիս տրամադիմ կէսին չափ է : Հը-
րատին տարեկան շըջանը արեգակին բո-
լորտիքը գրեթէ 687 օրը կըկատարի, կամ
մեր երկու տարիէն քիչ մը պակաս ատենին
մէջ . և իր աւանցքին վրայ 24 ժամին ու-
քառոսուն ըրպէին մէջ անգամ մը կը-
զառնայ : Իր մէջն հեռաւորութիւնը աւ-
րեգակին 144,000,000 մղոն է . ուստի մէկ
ժամին մէջը իր շըջանին վրայ 55,000 մղոն
յառաջ կըշարժի : Աս մոլորակին ցորեկը
և զիշէրը, և զանազան եղանակները շատ
նման են մեր երկրին օրերուն և եղանակնե-
րուն :

Հըսուը խաւարած կարմիր լոյս մը կու-
տայ՝ որով ուրիշ մոլորակներէն զիւրաւ-
կորոշվի : Իր երեսոյթը թէ ոք զիտակով
նայվի, շատ զարմանալի է իր մակերեսոյ-
թին ցուցուցած ան բազմաթիւ և բազմա-
տեսակ բիծերուն պատճառովը :

Հըսանի մթնոլորտը շատ թանձր է և
շատ տեղ կըտարածի, ինչպէս որ սոսուգ-
ված է անոր մէջն երեցած հաստատուն
աստղերուն մութ երեսոյթովը : Աս մոլորա-
կը երբեմն մեծ կերւայ մեզի և երբեմն
պլոտի . և ասիկա կըպատճառի երկրէս
շատ կամ քիչ հեռու ըլլալէն : Խըրոը շատ
մօտենայ երկրիս միայն 50,000,000 մղոն հե-
ռու է անկից . և երբոր շատ հեռունայ
240,000,000 մղոն հեռաւորութիւն ունի . և
իր հեռաւորութեան տարբերութիւնը է
190,000,000 մղոն, կամ երկրիս շըջանակին
տրամադիմն չափ :

Արեգակին ջերմութիւնը աս մոլորակին վրայ, մեր վայրած ջերմութեանը կէմն է : Ինչպէս որ արուսեակը առաւաօտեան և իրիկվան աստղ կրլայ մեզի, ասանկ ալ աս մեր բնակած մոլորակը փոփոխակի առաւօտեան ու իրիկվան աստղին պէս կերևայ Հրատին վրայ զտնըված բնակիչներուն :

բոնէ անոնք . ինքը քանի մը փոքրիկ զաւ կըներ ունի իր բնակարանը . ու բոլոր անժամանակը որ օդին մէջը անդին ասդին կըթուչը իր որսին ետևէն, անոնց վրայ կըմումակոր : Խըբոր իր բոյնը կըզառնակոր բերանը կերակուրով լեցուն, մշյամալյանկարծ մէկ անխորհուրդ տղի մը ձեռքովը կըզարնըվի, ու արունը վազելով գետինը կիյնայ ու կըմեռնի : Իր ձագերը անգիշերը առանց կերակուրի կանցուննեն . մինչեւ առւտու տրտմեալ ու ողորմելի կերպով կըճրւըստան, և իրենց հայրը չե գետեր թէ ինչպէս խաղաղունէ անոնք, երբոր ինքընքը բոյնին մէջը կըգոնայ առանց իր կողակցին : Խոլոր գիշերը առանց քունի անցունելին ետև առտրվանց կելայքանի մը ձանձ բռնելու, բայց ինքը չե գետեր ինչպէս կերակուրու է անոնք ինչպէս որ իրենց մայրը գիտէր . և իրիկուն չեղած մէկ ուրիշ մը կըզարնէ կըմեռցունէ անիկա : Ձագերը կըսկրախն հիմայ անօթութեննէ մարիլ . բերաննին բաց կըսպասեն, բայց մայր չե կայ որ գայ ու բան մը դնէ անոնց մէջ : Կընային որ ծեր թըռչունները իրենց քովիկը եղած բոյներուն կուգան ու կերթան, բայց բնաւ կարգը իրենց չե գար : Դիշերը ցուրտէն շատ կըմըսին : Իրենց մայրը սովորութիւն ըրեր երի թեւերովը, ու իր կուրծքին կակուղիկ փետուրներովը ծածկել անոնք . բայց հիմայ բան մը ըստնին վրանին ծածկելու : Վոտրվանց անոնցմէ երկուքը կամ իրեքը մուռած են : Վնացածներուն ճըւրուտալը հետզետէ կըթունայ, ան փոքրիկ գլուխ ները ալ չեն տեսնըվիր բոյնին դուրս երկընյուցած կերակուրի համար . կըլորդը զան ու կըարարախն բոյնին մէջը ինկած իրարու գէմ, ու քանի մը ժամեն բոլորն ալ կըմեռնին անօթութեննէ :

Բնական առողջութեան լաւագու :

ԱՅԵ թուչուններ որ շատ վնաս կըհասցուննէն մեր դաշտերուն ու պարտէզներուն, և անոնց կեանքը կարծելը մեր ապահովութիւնը կըսեպիվ . բայց ծիծեռնիկը մեզի վնաս մը չե տար, մանաւանդ թէ պատճառ ունինք խորհելու թէ անիկա մեզի աղէկութիւն ընելու համար կըխըլւի : Խըբոր օդը Ճեղքելով սրբնժաց կըթուչի ու այնպէս արագ արագ կըդառնայ, որ հազիւ թէ մարդուն աքը կընայ հետևիւն անոր, անիկա անատենը ձանձ կըբանէ կար, որ իրեն կերակուրը ըլլայ : Հազարաւոր ու միլիոնաւոր ձանձեր աս կերպովս կըմեռնին : ու թէ որ անոնք թող տրված ըլլային ապըիւն, ժամանակին երկրին երեսր պիտի ծածկէն . և մնք ան թշուառութեանը մէջ պիտի ինչպէս ուրիշ կըմեռնիք՝ ուրիշ կափառացիք քաշեցին : Անք չնորհակալ ըլլայւը ենք ծիծեռնիկնինքն որ աս նեղութիւն տրող հիւրէրուն համբանքը կըպակսիցուննեն :

Այսէ պարտինք միտքենիս բերել թէ, ծիծեռնիկները մեր երկիրը կուգան իրենց բոյները շնչելու : Անոնք մեր սահմանները հասածնուն պէս աս գործին վրայ են, ու երբոր իրենց ծագերը բաւական կըմեծնան թուշելու չափ, բոլորն ալ կըթուուն կերթան մեր երկիրէն : Ուստի հնար չէ մէկ ծիծեռնիկ մը մեռցունել, առանց քանի մը մանր թուչուններ որբ ծգելու : Իգ ծիծեռնիկը ամառլան իրիկունը իր բոյնէն կըլայ, ու իր բերանը ձանձով կըլեցուցի . բայց չե թէ իրեն համար միայն կըլուրի առաջ անծեղ մը պատճեցաւ, որուն յիշատիւթիւնը պատմելու արժանի է : Իր աէրը աղնուա-

ԳՐԱԿԱՐԱՅԻ մէջ անթղ բաված պեղին ինը մղոնի չափ հեռաւ դեղնեցիկ գեղ մը կայ, որուն անունը թառարէ կըմի : Եթ գեղին մէջը քանի մը տարի առաջ անծեղ մը պատճեցաւ, որուն յիշատիւթիւնը պատմելու արժանի է : Իր աէրը աղնուա-

կան մարդ մըն էր . անծեղը շատ ընտանաւ ցաւ թէ իր հետը և թէ աղջիկ ծառային հետը : Վղնուականը՝ որ մարմարապաշտ մարդ մըն էր , խել մը մանր բաղեր ունէր , ու ըսնք ամէն օր դաշտը հանել կուտար արածելու : Վղախինը միշտ անոնք առջեր կը ձրգեր դաշտը տանելու , անծեղն ալ անոր հետը կերթար : Վղախինը նկատեց որ բաղերուն դուրս ելլալու տաենը անծեղը միշտ պատրաստ կը կայնէր հաւեցին դուռը : Մէկ օր մը աղախինը բաղերը դուրս հանածին պէս , ետևէն կանչեցին , ու ետ դառնալուն մեծապէս զարմացաւ , երբոր տեսաւ թէ անծեղը բաղերը առջեր ձգեր դաշտը կը տանիկոր , ու ետ մնացողները կոտոցովք յաւաջ կը քշեկոր մեկաներուն հետ քաշել : Հետևեալ օրը աղախինը դիտմամբ թող տրւաւ որ անծեղը երթայ բաղերուն երամակին հետ , ու ան օրէն ետև բաղերը տանել բերելու բոլոր հոգը անծեղին վրայ ձգիցաւ : Իայց աղնուականը ան բաղերը չէր պահէր որ միայն վրանին նայի ու զըւարձնայ , հապա իր միտքը շամփուրը զարնել էր անոնք . և որովհետև հիմայ ըստ բաւականին գիրացեր էին , անծեղ թագուհին տեսաւ որ իր հպատակները օրէ օր կը պակսէինիկոր : Աս փորձութիւնը քաշութեամբ տարաւ , ու երբոր միայն մէկ քաղ մը մնացեր էր , իր սովորութեանը պէս տահնին դաշտը տարաւ ու տոնն բերաւ : Ա երջապէս մահվան անողորմ վճիւը ելաւ որ ան վերջին բաղն ալ իր ընկերներուն ետևէն երթայ , ու աղնուականին առջեր ելլայ անոր սեղանին վրայ : Վղախինը բոլունց խեղչ բաղը՝ ու դանակը ձեռքը իր տէրոջը հրամանը կատարելու վրայ էր , երբոր անծեղը սաստիկ բարկութեամբ անոր վրայ թւաւ , ձանկերովը ու կը տուցովը երեսը արտաւ , թաթախ բրաւ , ետքը թուաւ դնաց ու մէյմալ ետ չի դարձաւ :

Հայուաբնութեան:

Վ ԵԽԱԽԵՐԻ ոչ միայն դուրս ելած և մարդու երեալու տաեննին իրենց հանգերձին զգուշանալու են , հապա պէտք է

Վնծեղ , սահմանապահ : — Իադասարէն : — Շամփուր . շն:

որ սովորութիւն ըրած ըլլան ամէն ատեն հաւըրտած և մաքուր ըլլալու . անանկ որ խիստ անհոգութեամբ առանց հանդերձի եղած ատեննին ալ , իրենց խիստ անզգոյշ ժամերուն մէջ ալ ամչնալու պատճառ մը չունենան թէ որ պատահի մէկու մը երեալ : Կնիկները զիւրին կերպով չեն հաւտար թէ էրիկ մարդիկ որչափ կը նային անոնց հագուստին իրեւ անոնց վարքը ցուցունողի մը . անով կերեայ կնիկին ու նայնասիրութիւնը , թեթեռութիւնը , աղտեղութիւնը և յիմարութիւնը : Ո այելուչ պարզութիւնը նշանակ է թէ անիկա զոր ծածողը գիտէ թէ ինչ է գեղեցիկը և վայլածը :


Քէլէն արունել խոյնը ունեւու գէ՞՞ :

ՏՎՈՒԹՅՈՒՆ ՄԵՐ տարօւ պատանիի մը քիւթէն անգամ մը անանկ առատօրէն արուն վազեց , որ քանի մը անգամ մարեցաւ պատանին : Հանքային թթուներ , վիզին ձուն կապել և ուրիշ բաներ չի կրցին արունը կտրել : Իրեք օրէն ետև բժիշկ մը կանչը վեցաւ , որ Վրաքիայի խէժը փոշի բրած քիթն ՚ի վէր փչեց ու մէկէն ՚ի մէկ արունը կայնեցաւ :

Արշակունիանին ուրշնելիք :

Վ ԶԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՅԻ Ո Հ ՃՆՆԴԵԱՆ մէջ , ոչ կենցաղավարութեան մէջ և ոչ նոր սովորութիւններու հետևելու մէջ կը կայանայ , հապա մտքին մէջը : Վղնուականին իսկական և երևելի հանգամանքները ասոնք են . մէկ նուրբ զգացում մը վայելուչ եղած բաներուն վրայ . մէկ առաջադրութիւն մը մինչև անգամ պզոի բաներու մէջ իր օգուտը չի փնտրուելու անարդ կերպերով . Ճշմարտութեան վրայ հաստատութիւն մը . հեղութիւնով և մարդարակարութիւնով վարիլ մը ան ամէնուն հետը օրոնց հետը կը կենցաղավարի :

Վ մէն մարդ իր մեղքերուն համար սատանան կը մեղադրէ . բայց մեծ գեր ամէն մարդուն ընտանի գեր որ ամէնուն սրտին մէջը կը բնակի ու չոն կուտէ ու կը պառկի , բուն ինքը ան մեղանը մարդն է :



1720163

Բայուղակ:

Բայօնի ՏԻՒ մաղերը կարծեն և խիստ, մորթը մոխրագոյն է և զարդարված է ընդհանրապէս մութ գոյն կամ սեփ մօտ են անձինչ խոշոր բիծերով, որոնք քիչ մը կարգով ու կոնոնաւոր եղանակով շարված են, և մէկզմէկու մօտ են : Պոչին ծարը փոնջ մը երկան և ու մաղ ունի : Ընձուղացը Միքայիլի ներսի կողմերը կը բնակի, և յահան կը պլուրտի ան ժառախիս դաշտեցուն մէջը ու բլուրներուն վրայ՝ որ չոր ցամաք անսապատճերը կը ըստ ջապատճեն : Օքէ պէտ և ասանի՝ իր բնակած սահմանը շատ ընդարձակ է : Կուսիլիայի և Հապէշիստանի մէջ կը պոնրին, և մեծ անսապատճերը կը ըստ ջապատճեն : Օքէ պէտ և ասանի՝ իր բնակած սահմանը շատ ընձուղտի որսորդութիւն ընտլ կուղէ, մարդկային ընկերութիւնն է պէտք է որ հեռունայ, և ամսյի անսապատճերուն մէջը մտնայ, ուրիշութաղէմ առիւծը որսի համար ժուռ կուգայ, և գայլը և բորենին և վայրի շունը իրենց կերպակուրը կը փնտըւեն : Իս անմարդաբնակ տեղվանեքը ընձուղտը քիչ կը վախնայ մարդոցմէ . բայց շատ անգամ առիւծէն կը աղթըւիլի, թէպէտ և չէ թէ առանց դէմ դնելու անոր : Քանզի երբոր փախչելով աղատութու ճարը չի գտնայ նէ, իր կիցերը իրեւ գէնք կը բանեցունէ, միւ անգամանի առջեւի և ետեւի ոտքերովը սաստիկ անգիտութեամբ արագ արագ զարնելով, անանի որ կը սվի թէ երբեմն գլուխ կելայ, և շատ անգամ ալ իր կատղած թշնամին որ զինքը խածաւ կամ ճանկերովը ամուր մը բռնեց, իր ետեւին կը քաշէ կը տսնին մինչեւ որ ուժը հասնի ու իյնայ : Ծնձուղտը բնականաբար հեղահօգի է, երկը չու և խաղաղասէր . միայն յուսահաւ առութիւնն է առխաված առենն է որ կաշխատի դէմ դնել, և անսունը իր մեծ զօրութեանը համեմատ քաջութիւն և արագութիւն կը գործածէ : Կը բոր ետեւին ինըլի՛ անանի արագութեամբ ցաթկուտելով կը վագէ, որ ամենէն շուտ վաղող ձիէն ալ կանցնի : Ա-

մանք ըսին թէ իր քայլերը շատ անձունի են, և թէ վաղած ատենը շաւոտվ կը հոգնի ընձուղտը . բայց Վաղդիսցի ճամբորդ մը Անէն Կանակուա բնակած ատենը ընձուղտի մը ետեւէ ինկեր է, որ անիկա ասանկ կը տորագրէ : « Մէնք կը սէ ձիերը հեծանք ու անոր ետեւէն ինկանք, և երբեմն մեր հըրացանները կը կրակէինք . բայց ան կամաց կամաց այնչափ հեռացաւ մեզմէ, որ իրեք ժամ անոր ետեւէն երթալէն ետև պարուաւորեցանք կայնիլ, որովհետեւ մեր ձիերը շատ հոգնեցան և մենք ալ անիկա մեր աշքէն կորարնցուցինք » : Հետեւալ օրը հինգ հատ ընձուղտ տեսեր է ինքը, որոնց ետեւէն ինկեր է որսալու, բայց բոլոր օրը հոգնելէն ետև գիշերը վրայ եկեր է, ու անոնք աներեցին եղեր են : Երբուդ օրը ուրիշ եօթը հատ պատահէր են իրեն, որոնցմէ մէկուն ետեւէն ինկեր է իսկստ արագ ձիով մը . բայց ան ալ շատ հեռուն թողուցեր է զինքը, և աներեցին եղեր է իր աչքին . սակայն շուները հաստատութեամբ շարունակեր են, բայց չին համարձակեր վրան երթալու . որովհետեւ ընձուղտը ինքը վիճակնը կը պաշտպանէ եղեր շարունակ կից նետելով : Ետքը որսորդը եկեր հասեր է և հըրացանը կը ակելով զարկեր մեռուցեր է ան :

Անգլիայի մէջ միայն մէկ կենդանի ընձուղտ մը տեսներգած է, որ 1827ին Եգիպտոսի բդէշիւը Գէորգ Դ լնդութիւն կը դուն ընծայ խըկեր էր, և նոյն ատենը մէկ հատ մին ալ Փարիզ խըկեր էր : Կուսիայի մէջ Վէնեարի արաւային կողմերը քանի մը օրվան ճամբայ հեռու Վըրաբենը պղտիկուց ձեռք բերեր էին առ երկու ընձուղտը, և ուղտի կաթով սնուցեր էին անոնք : Ո երջը բդէշիւն հրամանովը Գանձիրէ բերվեցան, անկից ալ Վէղսէն Վէղսանդրիա իջան, և հոն նաւերը դրվեցան իւրաբանչեւը իր յատկացեալ տեղը երթալու համար : Գարիղ գացածը որ միւսէն գեղեցիկ էր, մինչեւ հիմայ ողջ է . մէկ կալը Վնդպիսահամելէն քիչ ժամանակ ետքը տկարութեան նշաններ ցուցուց, որ օրէ օր էվելցաւ, թէպէտ և շատ հոգով կը նայաւ .

Բդէշիւ գուշակ :

Ծնձուղտ . գլուխածէ : — Խիտ . ուշէ : — Բորենի . պատկան :

վէր . և 1828ին մեռաւ : Իր մորթը և ու կորները թագաւորը ընծայ ըրաւ չ ճնտոնի կենդանաբանական ընկերութեանը . ընկերութիւնն ալ անիկա իր հաւքած ուրիշ ընսկան բաներուն կարգը դրաւ , և հն ուղղը կրնայ տեմնալ անիկա :

Առաջարկած է իր կուտակութեան մէջ գույք գույք :

ՔՈՅՆ, տարիի չափ առաջ Նմերիդայի վաճառական մը Անտոնիլիքեան կրուզիներուն ծեր և մեծապատիւ թագաւորին ըսաւ թէ, « Խ քեզ կտոր մը թուղթի վրայ կրնամ զնել ” . կուզեր ըսել թէ իր անունը պիտի գրէ . և իր կապարենայ գրիչովը քառական բառը գրեց՝ որ էր թագաւորին անունը :

“ Ի՞նչ , անիկա ո՞չ ինձի նման է և ոչ ու թիշ մէկու մը ” . ըսաւ թագաւորը :

“ Բայց ասիկա քեզ կրնանակէ ըսաւ վաճառականը . և ով որ կարդալ գիտէ նէ կրհասկրնայ ան ” : թագաւորը չի հաւտաց աս բանիս , ինչու որ չէր իմանար թէ թուղթին վրայի ան ծուռումոււ նշանները լինչպէս կրնային վինքը նշանակել , կամ զիւրինաց բան մը ըլլաւ : Իր մտացը կուզութենէն բոլորովին դուրս էր աս բանը :

Վաճառականը ըսաւ թէ , « Ի՞նչ մը ըսել ինձի էրէկվան հոս եղող նաւապետին զը ըստցելու , և ես աս թուղթին վրայ զըստցեմ անոր ” :

Քամէհամէհա ըսաւ թէ , « Օ քուցէ նաւապետին որ էրէկվան իր ձեռքի կարմիր թաշկինակը ինձի խրկէ ” :

Վաճառականը իր կապարեայ գրիչովը կտոր մը թուղթի վրայ գրեց . « Պարո՞ն նաւապետ , կրինդրէմ որ գրաբերիս հետը ձեր էրէկվան կարմիր թաշկինակը ինձի խըլը կէք , որնոր քամէհամէհային ընծայ պիտի ընեմ . և զիս պարտաւոր կացուցէք ձեզ . և այլն ” :

Հաստ ըսնցաւ թագաւորին խրկած մարդք ետ գարճաւ , ու թաշկինակը և թուղթը թագաւորին ձեռքը տրաւ : թագաւորը մէկ ձեռքը թաշկինակը բունեց՝ և միւս

կապարեայ գրիչ . ու բարձրացաւ : — Թաշկինակ . իւրինաց :

ձեռքը թուղթը , և գարմանալով երկուքին վրայ կրնայէր : Բաղդատեց անոնք իրարուհետ : Ձեռողթը ձերմակ էր , թաշկինակը կարմիր : Թաշկինակին վրայ բան մը չիկար որ թուղթին վրայի նշանագիծներուն հետը նմանութիւն մը ունենար . և չէր կրնար իւմանալ թէ ինչ միաբանութիւն կամ յար մարութիւն կարելի էր ըլլաւ . թուղթին ու թաշկինակին մէջը : Վերջապէս վճռեց որ ան նշանագիրերուն վրայ մոգական արհետա մը կամ կախարդութիւն մը եղած պիտի ըլլար . քանզի թէ որ անանկ բան մը չըլլար նէ , չէր հասկրնար թէ ան անկենդան գիրը ինչպէս կրնար խօսիլ : Ուստի սկըսեց վախնաւ գիրէն նիկը և անտեղի եղողները : Վովախնաւ մէկ կողմանէ օգտակար եղաւ և մէկ կողմանէ վնասակար :

Օորօրինակ աս կողմանէ օգտակար եղաւ , որ միանգամայն իշխանները և ժողովուրդը ինքընքնին գողութեան տըւած է ին : Ուեծամեծները և իշխանները թոյլար ութիւն ըրեր էին գողութիւն լինելու . և պինտ առաջ հն գացո՞լ քարոզիները մէկ բան մը ազատ ապահով չէր կրնար ըլլաւ . թէ որ կրպաքի տակ , կամ իրենց աչքը վրան չըլլար նէ : Բայց զանակները և պատառաքաղները ու ամէն ան բանները որ չինող վարպետին անունը իրենց վրայ ունէին , կամ ինչեւիցէ հագուստի վերաբերեալ բան որ տէրոջը անունին առջի գիրը վրան ունէր կատարելապէս ազատ էր . որովհետեւ գիրը կրխսէր , և չիյտէին թէ ինչ կրզը րուցէր : Մրծաթ զրգալները ազատ էին վրանին գիրը ունենալուն համար , բայց երկաթէ և անագի եղածները կրկորսըլիքին :

Եւ միւս կողմանէ վնասակար եղաւ . որ

աս երկիրը շատ զժուարութեամբ համոզի եցան թէ գիրը կախարդութիւն չէ , և իրենց վնաս մը չի կրնար հացունել , հապաւ օգուտ կրնէ :

Տամնեօթը տարիի չափ առաջ քարոզիները անոնց լեզուն գիրի տակ առին , և հիմայ մէկ կղզ իէն մէկալը գացո՞լ նաւերուն մէջը հազիւ կրլայ մէկը որ շատ կամ քիչ նաևակ չի տանի բարեկամէ բարեկամի բուն իրենց լեզուովը : Խշանաւորները և

Ժողովուրդը շատ անդամ իրենց գործքերը զիրով կրկասուարեն : Իրենց քազաքական օրէնքները տպագրված են : Վաստածաշաշունչն շատ մասերը բռն իրենց լեզուովը թարգմանված ունին, և 50,000 հոգի շատ կամ քիչ կարգաւու գրել գիտեն հիմայ :

Արարածացանց համարութեանը ձևայ :

ԱՍՏՈՒՇՈՒՇՈՒՐԵՎԻՆ Ճշմարտութեանը վրայ չորս գլխաւոր ձեռնարշ կութիւններ կան : Վաւջննեն է՝ պատուիված հրաշքները . երկրորդ՝ մարգարէութիւնները . երրորդ՝ անոր վարդապետութեանը աղեկութիւննը, և չորրորդ՝ անիկա գրողներուն բարոյական վարքը : Հրաշքները Վատուածային իմաստութիւնները Վատուածային իմաստութիւններն, պատուական վարդապետութիւնները . Վատուածային բարութեանը, և անիկա գրողներուն բարոյական վարքը Վատուածային սրբութենէն : Վաճակ՝ Քիստոնէութիւնը աս չորս անշարժելի սիւներուն վրայ չինված է . այսինքն Վատուածոյ գորութեանը, իմաստութեանը, բարութեանը և սրբութեանը վրայ :

Վատուածաշոնչ Գիրքը պէտք է հընարգած ըլլալ աղեկ մարդիկներէ կամ հընրեշտակներէ, չար մարդիկներէ կամ զեւերէ, և կամ Վատուածմէ : Զի կրնար աղեկ մարդոցմէ կամ հրեշտակներէն հնարիած ըլլալ, ինչու որ անոնք ոչ կուզելին և ոչ կրնային գիրք մը շնել, և միշտ անիկա գրած ատենախն սուստ գրուցել, ըսելով “Վատուածային Տէր Վատուածային Տէր”, թէ որ անիկա բռն իրենց հնարիած ըլլալ : Զի կընար գէշ մարդոց կամ զեւերուն հնարիած ըլլալ ան, ինչու որ անոնք չէին ուղել անանկ մէկ գիրք գրել որ կըստատուիրէ ամէն պարտաւորութիւնները ընել, ամէն մեղքերը կարգիէ, և իրենց հոգիները յաւետեան դժոխքը կրտաստապարտէ : Ուստի ես աս հետեւութիւնը կըհանեմ թէ, Վատուածաշոնչը պէտք է որ Վատուածային աղեկ ցութեամբը տրված ըլլայ :

Որչափ մէծ անունի տէր ըլլաս, այնչափ պէտք է ցուշ ըլլաս քուպամի գործքերուդ վրայ :

Մէկ բարեկար բարեկար :

Օհ, որ դուն մինսկ անապատի մը մէջ անդին ասդին թափաւական պըտուեր եր երթալդ չի գիտնալով, արդեօք որչափի հոգով լուսած չորս կողմէ պիտի նայէիր մէկը տեսնալով որ Ճամբան ցուցը ներ քեզի : Ըէ որ նատէիր ու լայիր, և վախնայիր թէ պիտի կորսըվիս ու բնաւմէյմալ չի պիտի տեսնաս քու հօրդ տունը ու չի պիտի լսես քու խանդակաթ մօրդ ձայնը, թէ որ աս ողքալի վլաճակիդ մէջ մէկը գար քուկին թշուառութեանդ մէջ քեղ գտնար ու հարցուներ քեզի թէ, “Տըղաս, ինչո՞ւ համար կուլասկոր” . պատասխան պիտի տայիր թէ, “Վիսոս, իմ Ճամբան կորսընցուցի . շատ ատեն թափաւական պըտուեցայ, և անոր համար կուլամկոր ոք կըլախնամ թէ ալ մէյմալ բնաւ իմ սիրել լի ծընողքս չի պիտի տեսնամաս երկրիս վայ” :

Հիմայ ան մարդը որ անապատին ամէն կողմերը գիտէ, մէկէն քեզի լսեր թէ, “Դոմ սիրելի տղեկս, աչքիդ արյունքները սրբէ . ինչու որ ես քեղ կըտանիմ քու բնակարանդ ու քուկին հօրդ տունը” : Գտն աս մարդը մէկ բարերար բարեկամ մը պիտի կոչէիր :

Վհա Վատուածաշոնչը աս բարելսար բարեկամն է : Վնիկա ինքը սիրողներուն առաջնորդութիւն կընէ աս աշխարհիս վրատանդաւոր անսալատին մէջ : Վնիկա անոնց կըցուցնէ երկինքին Ճշմարիտ Ճամբան, որ է Քրիստոս : Վնիկա մէկ Ճամբայ մը կըցուցնէ որ ապահով ու անվտանգ է : Վն աւաջնորդները որ Վատուածային անապատին մէջը Ճամբարդներուն առջեւը կիյնան, գիտեն թէ սնապատին մէջը ուր տեղմանք անք կրգտնը զեղեցիկ աղքութիւներ : Եւ Ճամբարդները դէպ’ ի ան աղքութիւններուն կըտանին, ուր որ անոնք կընան նստիլ և ուտել և խմել : Վատուածաշոնչն ալ կատարած բռն պաշտօնը աս է . աշխարհիս անապատին մէջէն երկնային քաղաքը տանելու համար որի որ կառաջնորդէ նէ փըս կութեան աղքութիւներ կըցուցնէ որ ան Ճամբարդները կըպայցունեն, ու իրենց հօրը տունը երթալու Ճամբառն մէջ անոնց սիրերը կուրախացունեն :

Չեղապահոց սովորութեանը լրայ:

1. Չինաստանցիք կըկարծեն թէ մոռքին աթուը և մտմտալու գործարանը փորն է . բայց մենք կըկարծենք թէ գլուխն է :
2. Վնոնք ձախ կողմը պատուաւոր տեղ կըսեպին , մենք աջ կողմը :
3. Վնոնք կնիկներուն ոոքերը բնութեան հակառակ սխմելով պատիկ կըպահեն գեղեցկութեան համար . բայց ըրեւմտեան քանի մը աղքերը մէջքերնին անանկ կընեն :
4. Վնոնք գուրսի հանդերձնին յաճախ կըփոխին , մենք նէրսինը կամ անմիջապէս մարմինին վրայինը :
5. Վնոնց սուզի նշանը ձերմակ գոյնն է , մերը սեը :
6. Վնոնց մէջ որբեարի կնիկը իր մեծ տղին հնազանդ պիտի ըլլայ , մեր մէջը տը զան մօրը հնազանդելու է :
7. Վնոնք տղաքը կըշալկեն , մենք կը գրկենք անոնք :
8. Վնոնք երբոր բարեկամի մը գէմել շան և բարեեն , բուն իրենց ձեռքերը երար կըկապեն ու կըթօթվեն . մենք թէ որ ընելու ըլլանք , իրարու ձեռք կըքանընք :
9. Խնջցըի մէջ անոնք կերակուր չի ըստ կըսած գինի կըխմեն , մենք կերակուրին հետը կամ վերջը :
10. Վնոնք գինին տաք կըխմեն , մենք պաղ : Վնոնք թէյը պաղ կըխմեն , մենք տաք կըխմենք :
11. Վնոնց մէջը բան ծախու առնողը կըշառքը իր հետը պիտի ունենայ , մեր մէջը ծախողը կունենայ կշառք : Ամէն մարդ խարժելէն վախնալուն կշառքը իր հետը կըտանի վաճառանոցը :
12. Վնոնք վերէն ՚ի վար կըդրեն ու կըկարգան , մենք շնորակ հորիզոնաբար . անոնք աջ կողմէն դէպ ՚ի ձախ կողմը կըկարգան , մենք ձախ կողմէն դէպ ՚ի աջ կողմը :
13. Վնոնք բնոսբանը երեսին տակը կըդրնեն ու ծանօթութիւնները կամ մենութիւնը վերը , մենք անոնց հակառակը կընենք :

14. Վնոնք գլուխներուն գաղաթը քիչ մաղ կըձգեն , և անիկա հուսած կու

Յաճախ . ու ։ — Ու է յ այ :

պիկի պոչի պէս ետևին կըձգեն , մենք թէ գլուխնիս փոքրինք և թէ չի փոքրենք կարծ մազ կըձգենք :

15. Վնոնց մէջը հազարաւոր մարդիկ կըմեռնին չափէն քիչ ուտել և խմենուն համար , ինչու որ կերակուր չեն կընար գտնաւլ . մեր մէջը չափէն էվել ուտելէն և խմելէն :

16. Վնոնք կըսեն թէ մարդիկ բնութեամբ բարի են , մենք կըսենք թէ չար են :

17. Վնոնք իրենց քահանաները ու դատաւոնինք կանարգեն , (որովհետեւ անար գոնիքի արժանաւոր են ,) մենք կըպատուենք մելինները :

18. Վնոնք կըպաշտեն օձը , մենք կըսատ կըցունենք ան : Ուրիշ անհամար ասանկ բաններ ունին մեր սովորութիւններուն հակառակ , բայց աս չափս հերիք է մեզի ցուցնելու թէ Չինացիք ուշափ մեծ տարբերութիւնները աղքերէ :

Ես բարեկանին ըրած մորդապահ :

Բայց մէկ ուրիշ յաղթող մը չեղաւ որ Ամարուենն Պանոփառթէին չափ թնդանոթ կըակէր , անոր չափ պատերազմ ընէր , և անոր չափ թագաւորական աթուններ տակնուվը ընէր :

Յամի Տեառն 1805 էն մինչեւ 1815ը զանազան պատերազմներու մէջ միայն իր կողմէն երկու միլիոն ու կէս մարդիկ սպաններ վեցան , ամէնն ալ Գաղղիացի ըլլալով : Թողու տուր հազարաւոր Գերմանացինները , Շվեյցարը , Աէսէրը , Խտալացինները , Նաբուլիթանները և Լիւրիկեցինները որոնք բանութեամբ իր զօրքերուն հետ խառնեց . և միջակ հաշիւով մը կէս միլիոնէն պակասէն բլազ անոնք : Մը թշնամիններուն կողմէն իյնողներն ալ ձիշտ իր կողմէն իյնողներուն չափ պիտի ըլլան . և ասանկ իր թագաւորութեանը ետքի քանի մը փառաւոր տարինները վեց միլիոն մարդոց թափած արունովը ծախու առաւ :

Ես բարեկանանութիւն :

Ենթարեխառնութիւնը խելքը գինէն , ստակը քսակէն , արմունկը հանդերձէն , և առողջութիւնը մարմինէն կըհանէ , ու արբեցորդը շատ անգամ՝ աղքատանոցը կըձգէ :

Կողմացոյց :

ԱՊԴԱՅՆԵՅՅՈՅՅՅՈ ոչ միայն տեղեկանալու արժանաւոր բան մըն է, հապանակ ամենահարկաւոր գործիք մըն է մոտածելով մարդուս անկից քաղաք օգուտը՝ ապահովութիւնը, ու անոր համար ունեցած կարօւութիւնը : Մագնիսին բնական տարօրինակ յատկութիւնները քանի որ չէր իւ մացվեր, ու ան յատկութիւնները քանի որ 'ի գործ չէին զբվեր, նաւուղղութեան գիտութիւնը գծուարին, վտանգաւոր, և շատ անկատար էր : Հին ատենին նաւապետը որուն մի միայն առաջնորդը անշատիդ ջուրերուն վրայ երկնային մարմններն էին (որոնց օգնութիւնը անատոյդ էր, շատ անգամ ամպերով ծածկրվենուն կամ վոթորիկներուն ու ալե կոծութեանց պատճառաւը գծուարութեամբ քննըլենուն համար), չէր համարձակեր ցամաքէն շատ հեռունաւլ . և իր նաւորդութիւնը հարկաւ կարճ կըլլար, բայց երկար ժամանակի ու համբերութեան կարօւ էր : Կողմանացոյցին օգնութեամբը նաւապետը կրնայ հիմայ կատարեալ առաջախովութեամբ պարտարիլ խիստ հեռաւոր և անծանօթ ծովերուն վրայ, տարակյա չունենալով թէ ժամանակին դիպուած մը ըլլայ նէ, պիտի համնի ան ասհմանված տեղը ուր որ դէմ զբեր կերպեակոր : Կողմանացոյցին օգնութեամբը նոր աշխարհը հին աշխարհի բնակիչներուն ծանօթ եղաւ . և անոր օգնելովը հողագունտիս պինտ հեռաւոր մասերուն հետ հաղորդակայութիւն կըլլերի, անանել որ գանձուն սահմաններուն բերքերը դիւրին կերպալ հիմայ մէկզմէկու կերպան ու կուգանե :

Կողմանացոյցին գտնողը յայտնի չէ թէ նվէ և անիկա գործածելու սկրալած ճիշդ ժամանակը տարակուսելիք բան մըն է : Տաննիքերորդ դարին մշշէրը և ըստացիք նաւուղղութեան մէջ սկսեցին գործածել անիկա . ուստի հինգհարուր տարիէն էլլել է որ կըգործածիկոր : Կըալի թէ Զինացիք շատ ժամանակ առաջ ծանօթ էին կողմանացոյցին, բայց երբ յայտնի չէ, ու չենք կըր անոնց խօսքին համար անոնց խօսքին համարաւլ :

Կողմանացոյց ժամանաւլ . — Մագնիս . Բլլուգը :

տացիք զիտէին որ մագնիս քարը երկաթը իրեն քաշելու գորութիւն ունի . բայց աշնոք մէկ օգտակար բանի մը չի գործածեցին անիկա :

Կողմանացոյցին ստորագրութիւնը ընելէն առաջ հարկաւոր է մագնիսական գորութեան մէկ քանի նշանաւոր բաները բացատրել, ուսկից կրծագէ իր գորութիւնը և օգտակարութիւնը :

Մի միոյն բնական Մագնիսը որուն վըրայ ծանօթութիւն ունինք, Մագնիս բարեկ . ասիկա մէկ հանք մըն է մութ երկաթի գոյնով սկեի մօտ, որ Շ վէտի երկաթի հանքերուն մէջ շատ կրգտնչվի . նաև Վլւելուք քի քանի մը կողմէրը, Ա որիգայի մէջ, և երբեմն թէպէտ շատ քիչ Անդիտայի երկաթի հանքերուն մէջ կելլայ, ու նաև փոքր Վսիայի Մանիսա քաղաքին մօտերը կըգրունքի : Մանիսա լուներով շրջապատած քաղաք մըն է, որ շատ ժամանակէ 'ի վերն շամանաւոր էին ան լուները մագնիսի բերք ունենալուն համար : Աւ մագնիսին անուննաւ շատերէն կըկարծըլի որ Մանիսա քաղաքէն ելած է, առատ մագնիսական երկաթ ունենալուն համար : Բայց ուրիշները կըսէն թէ Մագնիս հովեւի մը անուն էր, որ մագնիսական զօրութիւնը առաջ ինքը դրտ ու, երբոր Խատ լուսնը վրայ պըտը տած ատենը իր ձեռքի երկաթ գաւազնը դէպէ 'ի ան կողմը կըճակէր ուր որ ան գոյացութիւնը կար : Աս գոյացութիւնը մանաւոր յատկութիւն մը ունի երկաթը իրեն քաշելու, որ անիկա կըքաշէ իր մասունքներուն հետ կըմիացունէ ու ամուր կըբռնէ իրեն յատուկ ձգողական զօրութիւնովը :

Մագնիսի մը կտորի վրայէն թէ որ ամեղ մը կամ երկաթի բարակ կտոր մը խել մը անդամ քաշվի, անիկա շննծու մագնիսի կըդառնայ : Օճէ որ աս մագնիսացեալ ամեղը զջուշութեամբ իր մէջ տեղէն բանի մը վրայ դրվի անանկ որ երկու կողմի ծանը բռնութիւնը հաւասար ըլլալով գիւրութեամբ կարէն յ դառնաւլ . և ինքնիրենը կըսկը զաննուլ մինչեւ որ իր մէկ ծարը գէպ 'ի շիտիսային բենուին շիտկըլի . ու թէ որ իր զիւրքէն խաղունես, նորէն երբոր թողտաս, կըսկը դառնաւլ մինչեւ որ գոյ նոյն կէտը ցուցընէ : Մագնիսացեալ ասեղը

Կրստոնայ նաև զօրութիւն երկաթը իրեն քաշելու, և ուրիշ երկաթի կամ պողպատի կար մագնիս դարձունելու իր ունեցած մագնիսական զօրութեանը չափ :

Մագնիսին մէկ ուրիշ զարմանալի յատ կութիւնն ալ առ է . թէ որ սլաքի կամ ասեղի մը Հիւսիսային կողմը ցուցընող ծարը մէկ ուրիշ ասեղի մը նոյն կողմը ցուցընող ծարին քովը բերվէ, մէկզմէկէ կրսկսին հեռունալ . բայց թէ որ մէկուն Հիւսիսային թեկուր ցուցընող ծարը մէկալին Հարաւային թեկուր ցուցընող ծարին մօտ բերվէ, մէկզմէկ կրսկսին քաշել և իրարու կրմունան :

Մագնիսական զօրութիւնը կրնայ տրվել երկաթի ալ պողպատի ալ . երկաթը գիւրութեամբ կընդունի, բայց շուտով կրկոր սլնցունէ անիկա . ընդ հակառակը պողպատը գիւրութեամբ չի մագնիսանոր, բայց անդամ մը ան զօրութիւնը որ ստանոյ, դրժուարութեամբ կըկրոսընցունէ : թէ քնական և թէ շնչու մագնիսին զօրութիւնը զսնագան կերպով կրնայ աւրեվիլ . զոր օրինակ՝ սաստիկ տաքութեամբ կայծակէն զարնը վելու, կամ նաև երկար ժամանակ անյարմար դրութեան մը մէջ մնալով :

Ասոնք են մագնիսական զօրութեան քանի մը զիխաւոր յատկութիւնները . բայց աս զօրութեան պատճառը իմանալու գուշէ քնառ կարող չի պիտի ըլամք մենք : Վմէնէն հաւանականը ան է որ երկիրս ինք քիրմէն կըպարունակէ կամ թէ իրօք ինքը է մէկ մեծ ահագին մագնիս մը . և թէ իր մագնիսական ծարերուն մէկը Հիւսիսային թեկուն մօտերը ու մէկալը . Հարաւային թեկուն մօտերը մէկ տեղ մըն է :

Վաւավարներուն գործածած կողմնացոյցին ինչ կերպով շննվիլը վերի ըսկածնելուն դիւրին կրնայ իմացվել : Կտոր մը մագնիս ժամացոյցի սլաքին պէս շննված, ու Հիւսիսային կողմը ցուցընող ծարը նատի ծարի պէս ձեւացուցած, զգուշութեամբ մէջ անդէն պողպատի մը ծարին վրայ կըդրվէ կըլու տուփի մը մէջ . ու անոր տակն ալ թուղթ մը անցուցած է, որուն վրայ Հարաւա Հիւսիս Վրեմելք և Վրեմութք գըրված կամ տոլված է, և իրենց մասունքնեւ

բուն բաժնը վածէ . և առ թուղթն ալ սլաքին հետը մէյտեղ կըդառնայ : Եաւողեղը միայն սլաքին վրայ նայելով՝ կըտեսնայ թէ իր նաւը դէպ' ի ո՛ր կողմը կըքալէկոր . և ուղածին պէս կըշուտիէ իր ճամբան :

Տասնըլիցերուրդ դարին մէջերը գտնը վեցաւ թէ սլաքը ուղղակի Հիւսիսային թեկուր չէր ցուցընէր, հապա քիչ մը դէպ' ի Վրեմելքան կողմը ծռած էր . և ասիկա անկէ ետև կոչվեցաւ Տարբերութիւն Կողմնացոյցի : Եսոր պատճառը կարծըլից ցաւ թէ երկրիս մագնիսական ծարը Ճիշտ մէյտեղ չէր իր առանցքին ծարին հետ ուրուն վրայ հողագունու կըդառնայ : Ենկէ ետև եղած քննութիւններն ալ կերևայ թէ ան կարծիքը կըհաստատեն . և Հիւսիսային մագնիսական թեկուր կըկարծըլի թէ պատիքին ծոցին Հիւսիսային արևմտեան կողմը կիյնայ :

Փէրբի նաւապետը Հիւսիսային ծովերը գտնալու ելած ատենը, երբոր մասնաւոր տեղի մը Հիւսիսային կողմը անցաւ որ Հուտանի նեղուցին դէպ' ի Վրեմուեան կողմը կիյնար, կողմնացոյցին սլաքը որ առաջ ինել մը աստիճան տարբերութիւն ունէր Հիւսիսային թեկուէն, հիմայ բոլորվին դարձաւ մինչեւ որ Հարաւային թեկուր ցուցընել սկսեց, ու ասանկ շարունակեց մինչեւ որ խել մը դէպ' ի Հիւսիս նաւեց : Գուցէ ասկից ետքը պիտի իմացվի թէ արդեօք ան տեղին ձգողական աղջու զօրութիւնը Ճշմարիտ մագնիսական թեկուին հետ մէկ է մի եթէ չէ :

Կողմնացոյցին տարբերութեանը վերաբերեալ մէկ խիստ նշանաւոր հանգամանք մըն ալ կայ, ու անոր պատճառը մինչեւ հիմայ փիլխառիքաներուն յայտնը վածէ :

Աս տարբերութիւնը երբոր աւած տեսնը ցաւ Լոնտոնի մէջ մագնիսական սլաքը Ճշմարիտ Հիւսիսային թեկուէն քանի մը աստիճան դէպ' ի Վրեմելք ծռած էր . աս տարբերութիւնը հետղչետէ քիշցաւ, մինչեւ որ վերջը՝ յամի Տեառն 1660, Երկրիս Հիւսիսային թեկուն հետ մէկ եղաւ : Ենկէ ետև քիչ քիչ սկսեց դէպ' ի Վրեմութք ծռիլ, մինչեւ որ 1828 ին գրեթէ քսանը հինգ աստիճանի մօտեցաւ տարբերութիւ-

նը . անկէ ՚ի վեր սկսեց պակմիլ , և հիւ
մայ քսանիւրեք աստիճանի չափ տարբերու
թիւն ունի :

Ուստի առաջարկունէ որդին բանէ իւ խօսք :

Դայէն հիմայ քու կեանքիդ մէկ աղէկ կէ
տին հասար , և սկսեցիր շխոկել քու
վարքդ և կենցաղավարութիւնդ ուսումնա
րանին մէջք իւրեք աշակերտ և իւրեւ մարդ :
Քու յառաջաղիւմութիւնդ ըստ մեծի մա
սին քուկին ջանքիդ և խոհեմութեանդ վրայ
կըլայանայ : Ուէ որ ժրութեամբ գունի քեզ
քու ուսմանդ չի տաս նէ՝ քուկին դասընկեր
ներուդ մէջէն ակարներուն կարզը պիտի
գտնաս քեզ , և քու միտքդ վախ մը պիտի
ունենայ՝ որ մէն դիւրութեամբ չի պիտէ կըր
նայ քժշկրվել : Դուն քեզ կատարեալ
վարժապետ մը ըսէ քու ամէն ուսումներուգ ,
և քուկին աշակերտակիցներուդ և վարժա
պետիդ առջեւը թող երեայ որ դուն քեզի
հաւատարիմ ես եղեր : Վշնատասէր և յա
րատեսդ աշակերտը զգուշաւոր մարդու մը
նման է , որ պարտքի տակ տկարայած ու
տրումած չէ : Բնաւ թող մի՛ տար քեզի ծու
լութեան մէջ իյնալ , ոչ ալ հարկաւոր
չեղած ատենը փողոցներուն մէջ երեալ :

Քու կարգայած զիրքերուդ մէջք կա
նոն գործածելու ես , և անհաստատ ձամ
բայ մը բռնելու չես : Ակսած զիրքդ լըմն
ցուր , միսյն թէ երբոր դիպուածոլ անօ
գուտ գիրք մը սկըսես անիկա ձեռքէդ ձը
գէ : Հեղինակիդ ձեռնարկութիւններուն
վարժապետը եղեր . քննէ՝ իմացիր՝ ստուգէ
անոր ըսածները , և բնաւ բաւական մի սե
պէր հարեւանցի կարգալը : Վճէկ նայէ իր
բանեցուցած ոճին , ու անոր մէջք գոնը
ված ընտիր տեղեւը և պակսութիւնները
միտքդ առ : Քեզի զրուցեմ՝ որ մէկ աշա
կերտի մը խիստ դժուարութեամբ ձեռք
ձգելու բանէրէն մէկը անխալ և գեղեցիկ
շարադրութիւն ընելու արհեստն է . անանկ
որ՝ ով անոր զրածը կարդայ կամ լսէ նէ՝
զուարձանայ անով , և օդուու ընդունի ան
կից : Վրանց համբերութեամբ ուսման
պարապելու մէկը չի համնիր աս բանիս :
Ուէ որ աղէկ զրիչք տէր ըլլալ կուզես , ու
տար բան մի՛ սեպէր և մի՛ լքանիր թէ որ :

Երբեմն քուկին ունեցած ձիրքերդ քեզմէ
շատ նըւաստներուն ունեցած ձիրքերէն ալ
վար դասելու պարտաւորիս նէ : Բայց միու
քրդ պահէ որ յարատեւութիւնը ամէնէն
մեծ խոչերը ու արգելքները մէկ դի կընէ :
Վուկին գրութեանսդ մէջ առանց իմաստի
գործածված բարձր բառեր թող չի գըտ
նըլին , և կծուութիւն կամ սաստկութիւն
ըլլայ հն : Պարզ թող ըլլայ ան , և առ
ջի հեղինակներուն կարգովը :

Վահանան կըց յաղընութիւն ունենալ :

Տկը՞ր ես , հիւանդութիւնը սենեակիդ
մէջն է ու մահը կայնե՞ր է . եկոր ուրե
մին և մահը ու յաւիտենականութիւնը
միտքերնիս առած նստինք , ու Վստուծոյ
պատուական խօսքերովը մէկպմէկ քաջալի
րենք : Վահը ինչ վախնալու բան ունի իր
մէջը՝ որնոր մեր ամէնօրհնեալ ֆրկիչը
մէկդի չի վերցուց : Հոգին մարմինէն
զատվելու ցաւե՞րը մի մեզ կըլախցունեն
Ուէ որ շատ սաստիկ ալ ըլլան անոնք , շատ
երկան չեն ըլլար , և մեր բարձրեալ ֆրը
կիչը՝ որմէն կըրդիսի կեանքը , զիտէ թէ
ինչ են մահուան ցաւերը : Խնքը իր բաղ
մագութ ողորմութիւններովը ըսաւ , “ Ո՞՛
վախնար՝ ինչու որ ես քու հետդ եմ . մի
զարհութիր՝ ինչու որ ես քու Վստուծդ եմ ,
որ քեզ պիտի զօրացունեմ ու պիտի օգնեմ
քեզի , և իմ արդարութեանս աջ ձեռքովը
պիտի պահպանէմ ” : Եայ . խա . 10 : Վ
խոստուները կըզօրացունէ մեզ համարձա
կութեամբ ըսէլու թէ , “ Ուէպէտ և մահին
շուքերուն մէջք քալեմ նէ ես , չարէն չի
պիտի վախնամ : Առաջ . իր . 4 :

Կըլախնանք մի մէկ նոր և անտեսանելի
աշխ սրհ մը մնալու : Բայց գիտնանք որ
անիկա ան աշխարհն է՝ ուր որ մեր երկնաց
ուր Վարդապէտը գնաց , ուր որ իր ժողո
վուրդին համար յաւիտենական բնակա
րաններ պատրաստէց , և իր հրեշտակները
դրաւ որ մեզ հն առաջնորդեն : Վւ ա
սանկ պաշտպանութիւն ունենալով ի՞նչ
բանէ պիտի վախնանք , և մեր յախտենա
կան ընակարանը երթալու ուր որ մեր ա
մէնօրհնեալ ֆրկիչը է , ինչու պիտի զըժ
կամակ ըլլանք :

ԶԵՐՈՆ և ԵԿՂՐՈՆ համար հայ:

Ը 1:81 մէջ փորձով գտնրվեցաւ որ 30 օխայ վարսակէն 20 հաց կըշինվի , որով ձի մը 10 օր կրնայ էվելի աղէկ պահվել օրը երկու հացով , քան եթէ 180 օխայ հում վարսակ ունենար նոյն չափ օրվան մէջ : Քանզի վարսակին կեղեց ալուրին հետը խոռնած կըմնայ , խմորը որչափ ջուր կուտէ նէ անոր ծանրութիւնն ալ կըմատըկիլ , և շատ ալ ջուր կուտէ : Օոր օրինակ տառը օխայ ցորենի ալուրով՝ առանց թեփի , հաց կըշինենք մեզի համար , որ հում ցորենէն ու անոր կեղեւէն ալ է վել կըքաշէ : Խւ դարձեալ ձիու մը թէ որ տասնըութը օխայ հում վարսակ պէտք է տալ օրը , անկից շատ քիչ հաց կըտրվի անոր , ինչու որ հացը էվելի մննդաբար է , մանաւանդ երբոր վարսակին հետը համար ալ խոռնրվի : Շ վէտի մէջ հաշիւ եղաւ որ բոլը ծախքէրէն ետքը շատ ստակ կեշ վենակոր վարսակէ ու հաճարէ շինված հացով կերակրելով ձիերը : Ո իշտ երբոր անոնց խոռ կուտան , տըւած խոռելուն իրեք մասին երկուքին չափ յարդ կըխառնեն հետը և ան հացէն կըմանրէն մէջը : Խ սացը աղէկ պահպանելու համար , կարկանդակի ձեռով շինելու է . ու թէ որ փուտն մէջ չորցունես երկան ժամանակ կըպահէլի առանց կորսընցունելու իր մնդաշը որակութիւնը :

ՕՐԱԿԱՆԱԿԱՆ:

Ի ՍՈՒՄՐԱՅՈՒ իր սաստիկ ծարաւութիւնը կովացունելու համար իր թագաւորութիւնը կիղէասին շնորհեց : Օարմանուի աղքուութիւն մը ունի ան խօսքը որ ջուրը խմելուն ու զովանալուն ետև զրուցեց այսպէս . “ Ո՛հ , վայ ինձի , որ սասակ վայրկեան մը տեելու հեշտութեան համար այսպէս մեծ թագաւորութիւն մը կորսընցուցի ” : Վ սիկա ինչպէս կրյարմաքի ան մարդուն որ մեղքին վայրկեան մը տեելու հեշտութիւններուն համար երկնից թագաւորութիւնը կըկորսընցունէ :

Ա պասակ . եռ-լոծ : — Հ աճար . շոշաբ :

Առաջաւագութիւններուն իւ:

Լ ԱՐԴՈՎ մէջ քարոզիլով իր քարոզներուն մէկին մէջը անսաստուածներուն դէմկը աէ . “ Թէ որ Ճմարիտ ըլլար թէ Վատուած չի կայ , ինչ փաստ թնչ ապացուցութիւնն կինար ունենալ անսաստուածը թէ ինքը մեռնելէն ետև . չի պիտի ապրի և թշուառական ըլլայ : Խր գոյութեան գալուն պատ ճառը ինչ էր նէ հոս , կրնայ նոյնը պատճառը ըլլալ իր գոյութեանը ասկից ետքը , կամ թէ որ առանց պատճառի գոյութեան եկիր է նէ աս վլճակին մէջը , կրնայ առանց պատճառի գոյութեան գալ ուրիշ վլճակի մը մէջալ : Խւ թէ որ իր ապականեալ սիրտը և գարշելի գործքերը այնչափ ապերջանիկ կընեն զինքը հոս , (որ կըցան կար ունչանալ քան թէ ապաւնի գոյութեան մը մէջ մննալու խորհուրդովը ինքընքը անհանդիտ ընել ,) ինչ արգելք կայ , կարելի է որ յաւիտեան ապերջանիկ ըլլայ ան :

Ուրեմն յիմար է ան մարդը որ կըցան կայ թէ Վատուած ըրլար . ասանկով յու սալով որ ապաւնի թշուառութիւնէ ապատըլայ : Քանզի ինքը թէ և կըհաւատայ թէ Վատուած չի կայ , բայց տակաւին հնար է որ ինքը գոյութեան զայ ասկից ետքը ինչ պէս որ հոս եկեր է : Խւ թէ որ գոյութեան գայ , իր չարութիւնները և մոլութիւնները ինչպէս որ հոս զինքը թշուառ կընենկըր , կընան նաև յաւիտեան թշուառական ընել անիկա հոն ” :

Հ նոտանի եռ-լոծներունէն :

Ա նոր տրտմութիւնները նւր պիտի ընդունին այնպէս մսիթարութիւն ինչպէս որ մեր ընտանեացը մէջը : Արուն ձեռոքը խանդակաթ սիրով պիտի սրբէ մեր ճակատին քրտինքը ամէն օրվան աշխատութիւններնուն մէջ , կամ մեր աչքին արցունքները և մահօւան պաղքատինքները հիւան զութեան անկողինին մէջ , ինչպէս որ կողակցին ձեռքը : Խրջանիկ և օրհնեալ ժամեր՝ որ մէզ անուշ և սուրբ ընկերութեամբ մը իրարու կըկապակցէք , ուրախութեամբ ձեզ կողջունեմ :

Գ եւ օրէնտի :

Չար բան է երբոր մեծ մարդիկ գէշ օրինակներ կուտան . բայց չարագոյն բան է երբոր բոլոր մարդիկ անոնց կըհետևին :

Այս անդրիայ կուտանքին մշակելով բարեկան առաջ
լեռ լուսեւ:

Սահ Անդրեամ պատոր կը լսոյ, բայց
շատ անգամ բաց և պարզ է: Մը բիկը
անդրը և փոթորիկները շատ են, բայց հան
դարտութիւնը էվելօք հասարակ է: Հե
ւանդութիւն կայ՝ բայց առողջութիւնը ան
կից շատ է: ցաւ կայ՝ բայց հանդուռութիւ
նը էվելի է: տրտմաւթիւն կայ՝ բայց ուրա
խութիւնը անկից էվել է: Շատերը կան
որ անդթութեան ոոքերուն տակը կոյի
կրուտը վեցան, բայց էվելի շատերը կան որ
հարատահարող բանաւորներուն ձեռքեն
անվնաս մնացին: Շատերը անօթութեանը
և մերկ մնալով կորսրվեցան, բայց ան
ննցմէ շատը հայ և հանդերձ գտան: Ա
մանք գերութիւն քաշեցին, բայց շատերը
ընաւ բանտը անդամ չե մտան: Կան որ իւ
րենց խելքը կորսրնցուցին, բայց շատերը
կան որ խելքենին գլուխնին պատճեցին: Եւ
րեսէ իշնողներուն և թշուաւութեան մէջ
մնացողներուն ցանկը երկան է: բայց էվել
լի երկան է անսնց անուններուն ցանլը ու
րմիք կերպով մը կրցան բարեկամ գտնուլ:
Նը բեմն կը լսվի թէ քաղաքներ կործաներ
են սոսկալի երկրաշարժութիւններով. բայց
շատ քաղաքներ ժամանակին ՚ի զատ ուրիշ
թշնամի մը չեն ճանանար: Նը բեմն կը լսիք
թէ փոթորիկներէ նաւեր կորսրվէր են.
բայց ընդհանրապէս շատերը ապահով իւ
րենց նաւաշանդիսուց կը համանին: Եհով ու
դոլով կարգացեր ենք հաւնձերուն ջարդը
վելուն վրայ: մազերիս տնկը վեր են, բա
զուկներնուս զարկը կայն՝ ը է սովին զար
հուրելին նկարագրութիւնովը. բայց մարդ
կային ազգը էվելօք տեսեր է պալատու եւ
դամակներ և խայտացող հնձողներ, և
ուրախութեամբ ու կերակուրով լցունծ
սիրուեր: Մարսափիելով կրտսոցինք մահ
առարածամին սոսկալի երկարանքին վրայ
որ մութը կը քալէ քահարկու կերպով ա
ներեսոյթ ճամբորդութիւն կը նէ աներեսոյթ
ձեռքով գարնելով, և փողոցներուն մեռել
ներով լցունելով, բայց էվելօք մեր միտ
քը կուգան բնութեամբ առողջութիւն
պարզեաղ բաները: Ինչպէս զամազլն գու
յացութիւններուն ունեցած զօրութիւննե

րը պահնք կորսրված առողջութիւնը ետ կը
դարձունեն, և մարդուս հիւանդութիւննե
նը կը քարժեն: Ենուշ և ախորժելի կլիմա
ներուն առողջապար օդերը, բժշկութիւն
տրող խոտերը, և առողջացուցիչ տղ
բուլմերը: Մարդկային ազգի մէկ մասը
սուրով կորսրվեցաւ, կամ սուրին պատճա
սովը եկած հիւանդութիւնով մեռաւ, կամ
սուգ առնելով ողբաց ան յափշտակութիւնը
և աւերմոնները որ սուրը դաշտերուն վրայ
սփռեց: կամ սուրին ըրած յափշտակու
թեանը թէտարոննէն մէկ հեռու տեղ մը
էվելի սաստիկ տրտմաւթիւններով ՚ի մահ
վիրաւորեցաւ իր գաւկին կամ էրկանը մա
հը լսելով: Բայց մարդոց մեծ մասը իրենց
օլերը խաղաղութեան պթուին վրայ ան
ցուցին, խաղաղ և ապահով իրենց բնա
կարանին մէջը նստան, իրենց զաշուերը
հնձեցին առանց վախնալու զինուորին ման
դաղին կամ անոր կրակ գտէլին, իրենց ըն
կերակնեն միարանութիւնը վայելեցին որ
ուրիշն հարուած մը ընդունեց բայց մի
այն բնութեան ձեռքէն, և վերջապէս ի
րենց հողին աւանդեցին հանդիսաւ և ընտա
նեկան անկողինին վրայ:

Դաշտ:

Սութիւն մըն է, մնայուն զանձ մըն է,
անապառելի հանք մըն է, ամպերով չի մը
թընցած օգ մըն է, առանց փոթորիկը եր
կինք մըն է: Եղօթքը հաղարաւմէկ օլինու
թիւններու արմատը աղքուրը և մայլն է:
Զեմ խօսիր ան ցուրտ տկար և անդօր ա
զօթքին վրայով, հապա ան ազօթքին վրա
յով որ կոտրած սիրունէ կը ծնանի և զարձի
եկած հոգին կելլայ:

Աղօթքը բոցերուն առակութիւնը մա
րեց, ասիւծներուն բերանը զոցեց, խու
վութիւնը հանդարտեցուց, պատերազմնե
րը խաղաղուց, տարերքներուն կատա
զութիւնը իջեցուց, դեերը հալածեց, հի
ւանդութիւնները բժշկեց, մահին շղ թա
ները կոտրտեց, երկինքին դուները բա
յաւ: Քաղաքները կործանմանէ ապատեց,
արեգակը ու լուսինը իրենց ճամբուն մէջը
կայնեցուց, կայծակին յառաջապիսութիւ

Նը արգիլեց , և մէկ խօսքով ապականեց աւրեց ամէն ան բաները որ թշնամի են մարդու : Դարձեալ կըսեմ , թէ ես չեմ խօսիր ան պոկոնքներով եղած աղօթքին վրայ , հապա անոր վրայ որ սրտին խոռոշ ներէն կելայ : Վրդարեւ ասանկ աղօթքին պէս զօրաւոր ուրիշ բան մը չի կայ . իրաւ ցունէ անոր համեմատ բան մը չի կայ :

Լուսապայծառ պատմումանով հագված ինքնակալը այնքափ շրեղ չի փայլեր որչափ ծունկի վրայ ինկած աղօթողը՝ որ իր Վատուժոյն հետը ունեցած հաղորդութիւնովը զարդարեալ և պաճուճեալ է : Ինչպէս քարձը , ինչպէս փառաւոր է աղօթքին արտօնութիւնը՝ որ մէկ մահկանացու մարդ մը հանդարտ և անխոռով համարձակութեամբ կրնայ մօտենալ և ազատաբար խօսակցիլ երկնաւոր ծառագաւորին մեծ վայել լութեաւ նը հետ , երբոր հազարաւոր հագար հրեշտակները և հրեշտակապետները ներկայ են , երբոր քերորէները ու սերորէները իրենց լուսաւորութիւնովը կը ջաջապատեն Վստուծոյ աթուը : Ո՞՛չ ասոր պէս պատիւ բնաւ տրվեցաւ մի մարդու : Երբոր մէկ ճշմարտ քրիստոնեայ մը իր ձեռքերը կը տարածէ առ Վստուծած ըրած աղօթքին մէջ ջր , ան վայրկեանին ինքը երկրաւոր բաները կը ձգէ անոնց անդի կողմը կանցնի , և սրբութեան թէներովը յաւիտենական կենաց թագաւորութեանը մէջ կանցնի : Ո՞ի միայն երկնաւոր բաներու վրայ կը խորհի , և աս ներկայ վիճակը ստուեր կը համարի և ոչ ճշմարտութիւն : Օ.է որ մենք ալ անոր չերմեռանդութիւնովը աղօթէինք , կինդանի հոգիով մը և լուսաւորեալ մտքով մը աղօթէինք , անատենը եթէ սատանան երւար շուտով պիտի փախչէր . և թէ որ դժոխքին դուսները լայնատարած բայցէին իսկոյն պիտի գոյվէին :

Ուշեւուն :

“Ա՞րուշ պահէ Հայութու օրը՝ անիստ առաջն պահէւլու համար” : Ելլու . ի.8.

ՎՈՈՅԱՐ թէ ով զքուցեց աս խօսքերը . կամ թէ դուն անիկա կանարգեց մի : Վնիկա կը գրգռուեակոր որ իր ընելքը քեզի ընէ մի : Խելքդ գլուխդ բեր . գուն անկից զօրաւոր մը չի :

“ Ա Եց օր ունի գործես ու ու բուլը գործերը ընեն . բայց եօներութ օրը ու Տէր Վատուծոյ Հայութնէ” : Քուկինդ չէ , հապա յատուկ Վստուծոյ օրն է : Վստուծած իրաւունքով անիկա իրեն համար կուզէ : Ինքը աշխարհին համար անիկա իրեն համար մի ու արեգակը ու լուսինը քանի որ երկինքը ու երկիրը մնայ , մարդոց զաւկիները աս օրըս գործածեն իրեն ծառայութիւն և պաշտօն մատուցանելու համար որ “ Ինքը անոնց ամէնուն կեանք ու շունչ ու ամէն բաները արւաւ” : Բայց երբոր չիսուս Քրիստոս մեռնէ լիներէն յարութիւն տուաւ , Քրիստոնէից եւ կեղեցին , ի պատիւ յարութեան Քրիստոսի Ճաքաթին տեղը կիրակին սկսեց պահէլ : Ուրեմն պէտք է որ մէկ մարդ մը Վստուծոյ ունեցածը իրմէն յափշտակէ : Եւ դուն ով կարդացող , արդեօք ան նոյն մարդն ես մի : Խելքդ գլուխդ առ , մուսնամ մը թէ ինչ կընեսկոր : Քուկին ունեցած բոլը բաներդ Վստուծ չի տրւամ մի քեղի , քու տարբած օրերուդ ամէն մէկը իր պարզելը չէ մի : Եւ դուն մէկ օր մընալ չէն իտար իրեն . կամ ան որ արդէն իրն է նէ “ Ք.Վ.Կ. չ” կըսէն մի իւրեն : Ինքը չի կամիր ու չի կրնար ձգէլ անիկա որուն վրայ որ իրաւունք ունի : Վստուծոյ օրն է . անիկա ասանկ էր ըսկիզեն հետէ , և ասանկ պիտի ըլլայ մինչ չե աշխարհի վերջը : Ինքը աս օրըս մէկ ուրիշը մը չի կրնար տալ . ով մարդիկ , “ Վատուծոյ բանաւուրը Վատուծոյ գունէ” :

Վստուծած որո՞ւ համար աս օրըս իրեն ծառայութեանը տրվիլ կուզէ . իրե՞ն համար , թէ քեզի համար : Վնտարակոյս իւրեն համար չէ : Վն ոչ քեզի կարօտութիւն ունի , ոչ ալ մէկ ուրիշ մարդու զաւկի մը : Անայէ դէպի ի երկինքը ու տե՛ս , նայէ ամենքը ուրագի քեզմէ բարձր են զլխուդ վըրայ . թէ որ մեղք գլուծեցիր նէ անորդէն ինչ կընես դուն : Օ.է որ քու յանցանքները շատցան նէ , անոր ինչ կընաս ընել

դուն : Եշ թէ որ արդար ես նէ, ի՞նչ կու-
տաս իրեն : Կամ թէ անկիա քու ձեռքէդ
ի՞նչ կըսդունի՞ : Ուրեմն յատկապէս քեզի
համար է որ քու Ստեղծող Վատուածդ աս-
բանս կընէ : Յատկապէս քեզի համար է
որ քեզ իրեն ծառայելու կըսնէ : Յատ-
կապէս քեզի համար է որ քու ժամանակիդ
մէկ մասը իրեն կըսնդրէ, ան որ բոլորը
քեզի տրւաւ : Ճանչցիր աս սէրը . սորվէ-
հաճէլի ըլլալ երկնից թագաւորին, քանի
որ երկրի վրայ ես : Նաևսկ անցուը աս ո-
րըս, ինչպէս որ կըյտւաս անցունել ան օ-
րը՝ որնոր ամեննելին չե պիտի վերջանայ :

Տէրը չէ թէ միայն սրբեց շաբաթ օրը, տեմնամ որ Հիսուս Կատուծոյ աջ կողմը պատրաստ նստեր է իմ հոգիս ընդունելու": Խս ան վայրկեանին յիշեցի որ Տրայինանունին վարքին մէջը կարդացի անմիջապէս իր մեռնելին առաջ իրեն հոգիին հետը ըրած ան առանձին խօսքը, որ կրաէ թէ, "Իս գլուխը ալ ասկէ ետև թագ չի պիտի հաղինի . աս ոռքերը ալ ասկէ ետև իշխաններուն վեզին վրայ չի պիտի շարժին . աս սիրտը ալ ասկէ ետև մարդոց գովասանութիւններովը չի պիտի շաղագորդը պիտի ականջնէրը ալ ասկէ ետև երաժշտական երգերով չի պիտի ընթարի . ոչ ալ աս աչքերը գեղեցիկ տեսարաններով պիտի զուարձանայ . և իմ հոգիս . . . այս ով իմ հոգիս, ինչ պիտի ըլլայ քեզի": Ականջնէր աս երկուքին ու ողոք մութեանը մէծութիւնը կարող բլաս գըտնաւ Հիսուս Քրիստոսի միջնորդութիւնը վը: Դուն չիտես թէ աս փրկութեան օրեւ բէն ո՞րչափ քիչ կրնաս ունենալ տակաւին: Եւ ինչպէս սոսկալի բան պիտի ըլլայ իր առւած ողոքմութիւնը չարաչալ զրծած ծերոյ աշխարհէս ելլալը:

የኢትዮጵያ ነገሮችን የጤና

ՀԱՅՈՎՅԵՔՆ Եփեկէն մէկ պարոն մը
ան տեղը պատահած դիպուածի մը վր-
բայ պատմութիւն մը կընէ որ ինքը աչքո-
վը տեսէր է : Օր մը կըսէ մէկ տուն մը
գացի իշխանի մը հետ տեսնըլիրու : Մս
իշխանը քիչ տարիներ առաջ չէր ճանանար
ան Մստուածը որ զինքը տեսէցէց : Մն ա-
ռանը ինքը իններուն տարեկանի չափ կար-
մէն օր Մստուածաշունը կըկարգար իրեն :
Մնիկա ամէն օր Մստուածաշունը լսելով,
Մստուածաշունը լուսաւորեցաւ : Եւ ին-
չու համար մենք ալ չի ջանանք անոր պէս-
սովորութիւն ընել մեղի ամէն օր անսուրք
գիրքին երեսներուն վրայ որոճալ , և անի-
կա մեր ոտքերուն ճրագ և մեր ճամբաներ-
բուն լոյս տրւող ընել :

Ապրձ հօմականութեած է:

Վազեւու որ իմ սենեակս որ նստել էի, մէկ պղտի աղջիկ մը տեսայ որ մօմին լուսովը կար կը կարերկոր : Ո՞սմը վասեր հատեր էր զրեթէ մինչև տակը . նայեցայ որ աղջիկը շատ արագութեամբ կը բանեցունէր իր ասեղը , և վերջատէս լսեցի որ ինքնիրէնը կը սեր . «Պէտք է որ ես շատ ժիր ըլլամ , ինչու որ ասկից ՚ի զատ ալ մօմ չունիմ , և ան ալ զրեթէ հատած է» :

Վատմացայի թէ ինչ մեծ բարոյականութիւն կայ աս աղջիանը զրուցած խօսքին մէջը : Ընշուշու ես անկից իմաստութիւն մը կինամ սորվիլ : Կեանքը ուրիշ բան չէ՝ ըստի ինքնիրէնս , բայց մէկ կարճ մօմ մը : Գրեթէ անիկա հատած է , և ես ալ ուրիշը չը չունիմ : Ուրեմն ինչ ջանքով կեանքին ամէն պարտաւորութիւնները կատարելու եռու պարտիմ ըլլալ ես : Քանի որ կեանքին ըլյուր ունիմ , ինչպէս զգուշութեամբ կատարելու եմ իմ երինաւոր Ատրպետիս հրամայած ամէն բանները :

Եալս և առաջ պարտիմ շուտ մը ահով ու դողով իմ փրկութիւնս զրբեթէ , գիտնալով որ երբ աս լոյսը համարնէ ալ ուրիշը չի կայ՝ որով մահիրնացուները կարող ըլլան պատրաստըլի :

Երկրորդ՝ պարտիմ ըոլորովին արթուր ըլլալ իմ ընկերներուս յաւիտենական օգուտին համար . քանի որ աս օրը առջևս է նէ զրբեթով , և մեղաւորները Տէր Յիսուս Քրիստոսին ըերելու ջանալով . ինչու որ իմ կարճ մօմ շատ չանցած պիտի մարի . և հանգերձեալ աշխարհին մէջ մեղաւորները զրարձընելու զործ չի կայ :

Երրորդ՝ պարտիմ անդադար աշխատիլ ամէն կերպ բարեզրութիւնները ընելու , երջանիկ ընելով ան ամէնը որ կրնամ . խեղձերուն օգնութիւն համանելով , ու բարեք ընելով ան ամէնուն՝ որոնց որ ձեռքս կը համի . ինչու որ աս լոյսը շուտով պիտի մարի , և անդի աշխարհի մէջը ինեղ ձերուն ու ներէալներուն համանելու կարող չեմ ըլլար ես :

Չորրորդ՝ պարտիմ իմ ամէն ընական ձիրքերս Վատմացայի վասքին ու Քրիստոսի Պատմաւորութիւնը համար զրբածել . ա-

նո՞ր զործը ընելով՝ որ քանի ցորեկ է նէ իս գործելու խրկեց . ինչու որ գիշերը կու գայ , որ ատեն մէկը չի կրնար զործել : «Ինչ որ քու ձեռքդ կը զանաց զործելու , քու բոլոր կարողութիւնովդ գործէ , կը սէ Սուրբ Գիւքը . ինչու որ ոչ խորհուրդ , ոչ զիտութիւն , և ոչ իմաստութիւն կայ գերեզմանին մէջ , ուր որ դուն կերթասկոր» :

ԿՐԻՍՏՈՆԵՐԻ

Ուսուփայի Մէծ գուպքը որ թագաւորական աթուրին ժառանգն է , մօմերս Վնդղիա գնաց . ուր ամփոփ մը չափ կեցաւ , և զանազան մարդասիրական ընկերութիւններու 20,000 կը սէլէս ինէն էվլիք պարզե արւաւ :

Ապրիսի 18էն մինչև Հունիսի 1ը Պուլունի նաւահանգիստը 33 թղթատար նաւ մաս 994 ձամբարութով , և 20 նաւ ելաւ անկից 1103 ձամբարութով :

Դամբորդները Խօնէն Վարսիլիու 17 ժամին մէջ կրնան երթալ հիմայ , 8ը կամ 9ը ժամ Ուշն գետին վրայէն արագընթաց շոգենաւով իջնաւով , և մնացածը թէթէ կառքերով . բայր աս ձամբուն հեռաւորութիւնը է 300 մզոն :

Խօթանասունը հինգ տարիի չափ քիչ աս նին մէջը 16 անդամ աշխատհաւեր սորվեր պատահեցան Հնդկաստանի մէջը : Վս սորվերուն պատահած արարիներն են 1766, 1770, 1782, 1792, 1803, 1804, 1819, 1820, 1824, 1829, 1832, 1833, 1836, 1837 1838, և 1839 : Վսոնց քանի մը առջնաները պատերազմներու պատճառով եղած կրնանք սեսիլ : 1838ին սովոր շատ սաստիկ եղած կը պատմեն : Վկրարապատ գաւառին մէջը Վպրիլի 14ին 78,000 սովալլուկ կողրմելիներ կերակրվեցան հասարակաց ողբրմութիւնովք . և Վարափի 14ն մինչև 15ը տկարութենէ աշքերնին խաւ մրած 71,533 թըշւառական ստեղծվածներ կերակրվեցան նոյն կերպովք : Վովամահ կորուրվածներուն թիւը միակ համրանքով ամփար 10,000ի կը հաներ :

Ոծուերս Վմերիկայէն նաւ մը լիցուն սառն խրոկլիցաւ Կոր Հունատիա . ուր տեղի կիման խիստ տաք ըլլալուն բնակիչները ուրախութեամբ ընդունեցին անիկա : Տես ինազարութեան և առուտուրին օդուտը :

Ապրիս ամսուն մէջը Փարփղի մէջ կտրքած կենդանիները էին 6328 եղ , 1286 կով , 7614 չորթ , 35,370 ոչխար : 400,000 օխակն էվլիք արպ գործածվեցաւ :

Սաւան . պատուաւ . — Ռարպ . էլլապու :